



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 28 >> սեպտեմբերի 2018թ.

N 489-Ժ.

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1" Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2" Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ԶԱՆԶՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
« 28 » սեպտեմբերի 2018թ.
N 481-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործառնական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի հաշվառումը.

2) Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի հաշվառումն ապահովելու նպատակով համապատասխան հաշիվների վարումը.

3) Պետական ընդհանուր ռեսուրսների, պետական պարտքային պարտավորությունների հետ կապված գործառնությունների իրականացումը.

4) Համայնքների և բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների (այսուհետ՝ ԲՍԿ) բյուջեների հաշվառումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառնություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգմանը համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի հաշվառումը ըստ ծախսատեսակների.

2) Հայաստանի Հանրապետության բյուջետային դասակարգմանը համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների հաշվառումը ըստ եկամտատեսակների.

3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, համայնքների և ԲՍԿ-ների բյուջեների հաշվառումն ապահովելու նպատակով համապատասխան հաշիվների բացումը և վարումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գանձապետական համակարգում ներառված իրավաբանական անձանց հաշիվների բացումը և վարումը.

4) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում վարվող արտաբյուջետային հաշիվների հաշվառումը և անհրաժեշտության դեպքում տեղեկատվության տրամադրումը.

5) պետական ընդհանուր ռեսուրսների, պետական պարտքային պարտավորությունների հետ կապված գործառնությունների իրականացումը.

6) «BankMail» համակարգի միջոցով էլեկտրոնային վճարումների և մուտքերի ապահովումը.

7) «Client-Treasury», «e-payments» և վճարումներ ընդունող այլ վճարային համակարգերի սպասարկումը.

8) պետական բյուջեից ֆինանսավորվող գերատեսչություններից և նախարարություններից վերջիններիս բյուջետային ֆինանսավորման հայտերի ընդունումը, հայտերի իրավագործության ստուգումը և համապատասխան գործառնական ստորաբաժանմանը փոխանցումը.

9) համայնքների և ԲՄԿ-ների բյուջեների կատարման նկատմամբ նախնական հսկողության իրականացումը.

10) համայնքների բյուջեների հաշվառումը և հաշվետվությունների կազմումը.

11) համայնքներից և ԲՄԿ-ներից ֆինանսական գործունեության նախահաշիվների ու դրանց սահմաններում վճարումների իրականացման ժամանակացույցերի ընդունումը և հաստատումը.

12) համայնքների և ԲՄԿ-ների կողմից կնքված պայմանագրերի քաղվածքների ընդունումը և հաստատումը.

13) համայնքների և ԲՄԿ-ների ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ու վճարման հանձնարարագրերի ընդունումը, ստուգումը և դրանց հիման վրա համապատասխան գանձապետական հաշիվներից վճարումների կատարումը.

14) ԲՄԿ-ների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի միջոցով կանխիկ դրամի հատկացման գործառույթի իրականացումը, վարչության կողմից վարվող հաշիվների շարժի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

15) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարի համապատասխան տեղակալի հանձնարարականներով կարգավորվող Հայաստանի Հանրապետության պետական, համայնքային և ԲՄԿ-ների բյուջեների եկամտային և ծախսային մասին առնչվող գործառույթների ապահովումը.

16) Վարչության իրավասությունների շրջանակներում տեղեկատվության ազատության ապահովումը.

17) Նախարարության կանոնադրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթների իրականացումը.

18) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

12. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

13. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Պետական բյուջեի հաշվառման բաժին.

2) Համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին:

14. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):